

1 MAR 2010

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԼԻԱԶՈՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Շրջաբերական № 95

УПОЛЗАКГОССТРАХА

С. С. Р. АРМЕНИИ

Բուսական մշակույթների լուծար-
քումը կարկտահարությունից

№ 3 20 1/95

14 11 1930 թ.
Эривань

ՊԵՏԱԳԻ ԲՈՒՈՐ ԴԱՎ ԴՐԱՍԵՆՑԱԿՆԵՐԻՆ ՅԵՎ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ

(Պատճեն Գյուղխորհուրդներին)

Ընթացիկ 1929—30 գործառնական տարվա ընթացքում
Պետապի դավդրասենյակները, գործակալները և գ. խոր-
հուրդները կարկտահարություն վնասների լուծարքման գոր-
ծում պետք է ղեկավարվեն՝

- 1) 1928 թ. հրատ. ընդհանուր կողարային կանոններով
- 2) 1928 թ. կամավոր ապահովագրություն կանոններով և
- 3) հանրայնացրած սեկտորի դույրի պարտադիր ապահովա-
գրություն կանոններով:

Ա. ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԿԵՏԱ- ՀԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊԵՐՈՒՄ

1. Գյուղխորհուրդները պարտավոր են ձևաք անել բո-
լոր միջոցները իրենց չըջանի ապահովագրություն իրազեկ
դարձնելու այն մասին, վոր կարկտահարություն ամեն մեկ
ստանձին դեպքում նրանք պարտավոր են անմիջապես և վոչ
ուշ յերկու օրից հայանելու գ. խորհուրդներին, նախազդու-
չացնելով, վոր բերքի հավաքելուց հետո, Պետապի վոչ մի
հայտարարություն չի ընդունում և վնասի համար պատու-
խանատու չէ: (§ 32 կանոնների):

2. Գ. խորհուրդները պետք է բացատրեն ընակչությունը
վոր կանոնները հիման վրա Պետապի իրավունք ունի մերժե-
լու ապահովագրության վարձատրությունը բոլոր դիտավոր-
յալ սխալագրությունների համար:



3. Գյուղխորհուրդները պետք է բացատրեն գյուղացիներին վոր բոլոր վեճերը թե տարածության վերաբերյալ և թե վնասի տոկոսի մասին պետք է վորոշվեն տեղում ախար կազմելու ժամանակ Պետապի ներկայացուցչի կողմից, հետագայում վոր մի դեպքում չեն ընդունվի այդ հարցի վերաբերյալ բողոքներ:

4. Գյուղխորհուրդները վոր ուշ քան յերեք օրից ամեն մեկ տեղի ունեցած կարկտահարության մասին հայտնում են գրավոր Պետապի գործակալության:

5. Գյուղխորհուրդները, քաղաքացիները և կոլտնտեսությունների ներկայացուցիչների գործակցությամբ գյուղացիական փոխողության կոմիտեյի և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ամեն մեկ կարկտահարության դեպքում կազմում են վնասված ցանքերի ցուցակը Պետապի համապատասխան բլանկի վրա ցույց տալով նրանց աղբանուներն, անունները և հայրանունները, վնասված տարածության չափն առանձին առանձին ամեն մեկ մշակույթի վերաբերմամբ, կարկտահարությունից առաջ յեկած վնասի մոտավոր տոկոսը նույնպես առանձին առանձին ամեն մեկ մշակույթի համար (կցումն № 1):

6. Այդպիսի կարգով պատրաստված կարկտահարությունից վնասված գյուղացիության ցուցակը, գյուղխորհուրդները մինչ այդպիսին, Պետապի գործակալին ուղարկելը, 3—4 օրվա ընթացքում կախում են մի աչքի ընկնող տեղում, վորպեսզի ապահովագիրներն ստուգեն արդյոք բաց չի՞ թողնված իրենց ցանքերը և հրավիրում են գյուղհամայնքի ընդհանուր ժողով, վորտեղ կարգալով կարկտահարված տնտեսությունների ցուցակը ուղղում են սխալները և ավելացնում բաց թողնվածները:

7. Չորս օրից հետո կարկտահարությունից վնասված ցանքերի ցուցակը գյուղխորհուրդները ներկայացնում են Պետապի գործակալին:

8. Լուծարքողների (գյուղատնտես ու գործակալ) գա-

լուն գյուղխորհուրդները հրավիրում են վնասված ապահովագիրների ընդհանուր ժողով, վորտեղ ընտրվում է հատուկ հանձնաժողով, կամլիազորներ, վորոնք պետք է մասնակցեն վնասված տարածության վնասի տոկոսի վորոշման գործին: Գյուղխորհուրդի նախագահի մասնակցությունը այդ հանձնաժողովում պարտագիր է:

9. Գյուղխորհուրդները պետք է համայնքի ժողովում հայտնեն գյուղացիներին, վոր մինչև վնասի վերջնական վորոշումն արգելվում է վնասված ցանքներում արածացնել անասուններ և անհասարակ այնպիսի գործողություններ, վորոնք կարող են վնասի տոկոսն ավելացնել:

10. Գյուղխորհուրդները պետք է բոլոր միջոցները ձեռք առնեն, վոր վնասված տարածությունները ցույց տրվեն ճիշտ. բոլոր պատասխանատվությունն ընկնում է գյուղխորհուրդների վրա:

Բ. ԳՈՐԾԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Գործակալը պարտավոր է մատակարարել իր շրջանի գյուղխորհուրդներին համապատասխան քանակով՝ ցուցակի բլանկներով նույնպես և խիստ հսկողություն ունենան վորպեսզի կանոնավոր ու ժամանակին կազմվեն ու ներկայացվեն կարկտահարությունից վնասված ապահովագիրներին ցուցակները:

12. Գործակալը գյուղխորհուրդներից ստանալով տեղեկություն կարկտահարության մասին անմիջապես ժամանում է կարկտահարության վայրը, պարզելու վնասված տարածությունը և մոտավորապես վնասի ընդհանուր չափը, գալ. գրասենյակին հայտնելու համար:

13. Գյուղխորհուրդներից ստանալով կարկտահարությունից վնասված անձանց ցուցակները գործակալն այդպիսին համարակալում է հաջորդաբար ըստ կարգի:

14. Ամեն չարաթ ու գործակալը կարկտահարության մասին տեղեկություն է ուղարկում գալ. գրասենյակին ըստ որինակի (տես կցում № 2):

15. Այն դեպքերում, յերբ կարկտահարությունից վնասված տարածութիւնը 300 հեկտարից (300) դեպատինից աւելի չէ, գործակալը տեղեկացնում է գալգրասենյակին հետագրով մոտավորապես հետեյալ բովանդակութեամբ: «Գալգրասենյակին հունիսի 20 Յերանոսում կարկտահարված է 450 հեկտար ցորեն»:

16. Գյուղխորհուրդներից ստացված կարկտահարված ցուցակների հիման վրա գործակալը ակտի բլանկ № 21-ի վրա կազմում է ցուցակ ամեն մեկ սուժողի վերաբերյալ լցնելով 1, 2, 3, 4, 5, 6 սյունյակները: այսինքն համարներն ըստ կարգի, գրանցման ցուցակի № բեգիտորացիոն ցուցակի չորս, ապահովողի ազգանունը, անունը և հայրանունը կարկտահարված մշակույթների տեսակը և ապահովողից ստացված տարածութեան չափն անպայման հեկտարներով կամ դեպատիններով, ցույց չտալով կարկտահարված տարածութիւնը և տոկոսները:

Այդ յերկու սյունյակները (6—7) ըստ ակտի լրացվում են լուծարքողի կողմից տեղում վնասը վորոշելու ժամանակ, անպայման վնասի տարածութիւնը նշել դեպատիններով, կամ հեկտարներով (կցում № 3):

17. Այդպիսի կարգով պատրաստված լուծարքման ակտերի բլանկներով գործակալը գյուղատնտեսի հետ միասին ժամանում են կարկտահարութեան վայրը վնասների լուծարքման համար:

Ծանոթութիւն. — վնասների լուծարքումը Հողօգտագործի գյուղատնտեսի կողմից կատարելու դեպքում գործակալի ներկայութիւնը պարտադիր է և առանց Պետապի ներկայացուցչի լուծարքը չի համարվի որինավոր:

18. Գյուղատնտեսի բացակայութեան դեպքում գործակալը հետագրում է Գալգրասենյակին և ապաստում է կարգադրութեան:

Յեթե վնասված տարածութիւնը 50 հեկտ. (մոտավորապես 50 դես.) աւելի չէ, ապա գործակալը վնասը լուծարքում է ինքնուրույն, բացի հատուկ մշակույթներից, վորոնց լուծարքը կատարվում է գյուղատնտեսի մասնակցութեամբ:

19. Ինչպես գյուղատնտեսը, նույնպես և գործակալը վնասների լուծարքման ժամանակ պարզում են հետեյալը:

ա) կարկտից վնասված մշակույթի ճիշտ չափը և լուծարքային ակտի 9-րդ սյունյակը և բ) վորոշում են ըստ տնտեսութիւնների և ըստ առանձին առանձին մշակույթների վնասի տոկոսը համաձայն հրահանգի, վորի համար լուծարքողները (գործակալը կամ գյուղատնտեսը) հանձնաժողովի հետ միասին պետք է անցնեն ամեն մեկ արտ առանձնապես տեղում վորոշեն կարկտից վնասված մշակույթի տոկոսները:

Ծանոթութիւն. — Յեթե վնասների լուծարքման և կարկտից առաջ յեկած աւերածութեան տոկոսի վորոշման ընթացքում պարզվում է, վոր աւելի տնտեսութիւնը կամ աւելի մշակույթը վնասված չէ, ապա ի դիմաց աւելի տնտեսութեան կամ մշակույթի 8, 9, 10, 11, 12, 13, 14 սյունյակներում գրվում է «չի վնասված»:

20. Ընդհանուր վնասի տոկոսներից դուրս հանել այլ պատահարներից վնասված 12 սյունյակում նշված աւելիները:

Որինակ՝ ցորենը փչացել է 30 տոկոսը յերաչափ և կարկտահարութիւնից 40 տոկոսն ընդամենը 70 տոկոս (տես ակտի 12 և 13 սյունյակները):

12-րդ սյունյակում հարկավոր է նշել վոր թե 70 տոկոս, այլ 40 տոկոս:

Ծանոթութիւն. — Այն դեպքում յերբ լուծարքողը ինքը չի կարողանում պարզել բերքի վնասի այլ պատճառները, բացի կարկտահարութիւնից, նա պիտի դիմի ուրիշ որպանների և վերցնի վնասի տոկոսները Հողօգտագործի, Ֆինոգիոմի և այլն:

21. Այդպիսի կարգով կազմված ակտն ստորագրում են:

ա) Հանձնաժողովի անդամները, բ) գյուղխորհուրդի ներկայացուցիչը, գ) գիտակ անձնավորութիւնը (գյուղատնտեսը) և դ) Պետապի գործակալը, կամ տեսուչը:

Ծանոթութիւն. — Բոլոր ակտերի վրա հարկավոր է նշել, վոր աւելի ակտը վերջնական է և հետագայում վոր մի դիմում կամ բողոք չի ընդունի:

22. Ակտը կազմող (գյուղատնտեսը կամ գործակալը)

պետք է կարկտահարութեան ակտի բոլոր հարցերին պատասխանի ճիշտ և վորոշակի:

23. Իբրեւ ընդհանուր կանոն, կարկտահարութեան լուծարքումը կատարվում է բերքի հավաքելուց յերկու շաբաթ առաջ և վոչ ուշ բերքի հավաքելուց:

Այդ պատճառով եւ վնասի վերջնական տոկոսը վորոշվում է այն ժամանակ յերբ բերքի արդյունքը վերջնականապէս պարզվում է: Որինակ՝ յենթագրեւնք մայիս ամսում կարկտահարված է ցորենի դաշտը և լուծարքողի կարծիքով վնասը 50 տոկոս է: Այդպիսի դեպքում ակտը կազմել և անմիջապէս վնասը բավարարել չի կարելի, այլ հարկավոր է սպասել մինչև վոր վերջնականապէս պարզվի բերքի արդյունքը և վնասի տոկոսը վորոշել վոչ ուշ քան յերկու շաբաթ մինչ այդ ցորենի բերքը հավաքելը:

24. Ակտը տեղում կազմելուց հետո աշխնքն ձև № 21-ի (յերկրորդ յերեսի 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12 և 13 սյունյակները լրացնելուց հետո, գործակալը վորոշու մ է վնասի գումարը) ապահովագրական վարձատրությունը (սյունյակներ 15, 16, 17):

Մանրություն.— 3, 4, 8, 10 և 11 սյունյակները լրացվում են յենթե վնասված ցանքերն ապահովագրված են և կամավոր կարգով:

Ապահովագրական վարձատրությունները դուրս բերելու ժամանակ անհրաժեշտ է որացույցային տարում ցուցակագրված տարածությունները համեմատել կարկտահարված տարածությունների հետ և յենթե կպարզվի, վոր վնասված տարածության չափը ավելի քիչ է քան ցուցակագրվածը, այդ դեպքում վնասի գումարը դուրս բերել համաձայն կարկտահարված տարածության հիման վրա, իսկ յենթե վնասված տարածության չափը ավելի շատ կլինի, քան թե ցուցակագրվածը, այդ դեպքում վնասի գումարները դուրս բերել 7-րդ սյունյակում ցույց տված տարածությունով:

Բացի դրանից կարող է պատահել նաև հետևյալը, վոր միեւնոյն տնտեսութեան բույսերը լինեն կարկտահարված դաշտի սահմաններում: Նույն դատին պատկանող կույտուրաները և դաշտի տոկոսներով, այդ դեպքում անհրաժեշտ է դուրս բերել վնասի միջին տոկոսը:

Ապահովագրական վարձատրությունները հարկավոր է հաշվել 1929-30 թ. գործառնական տարվա նորմաներով, վորի մասին ուղարկված է յեղել ձեզ վարչութեանս № 47 շրջաբերականը 29-ին հուլիսի 1929 թ.:

25. Ապահովագրված մշակույթների տարածությունը (ըստ տեսակների— 7 սյունյակը) վնասների լուծարքման ժամանակ պետք է ընդունել վոչ ավել այն տարածություններից, վորը ցուցակագրված է ընթացիկ (ըստ լուծարքման ժամանակի) որացույցային տարում, իսկ յենթե ավել շատ ցուցակագրություն չի յեղել, այդ դեպքում հաշվի յետնչվում իրական ցանքի վնասված տարածությունը:

26. Յենթե կպարզվի վոր, մի տնտեսութեան վերցրել և կիսովի կամ ընդհակառակը և մշակված տարածությունը ցուցակագրության ժամանակ հաշվի յետնչված կիսովի տվողի կամ վերցնողի վրա, այդ դեպքում ակտի 2-րդ սյունյակում ցույց է տրվում ձև № 1 կտպարային ցուցակի տնտեսութեան համարը, 7-րդ սյունյակում ցուցակագրված տարածությունը և ազատ սյունյակում գրվում է «կիսովի» ու վորպիսիների համար կազմվում է հատուկ արձանագրություն և այդպիսիները կցվում են կարկտահարութեան ակտին:

27. Այն դեպքում, յերբ միեւնոյն բուսական մշակույթները կարկտահարվում են յերկու կամ մի քանի անգամ այդպիսի դեպքում պետք է վորոշեն մեկ ընդհանուր տոկոսը:

Որինակ Գառապարյան Կարապետի ցորենը կարկտահարվել է 30 ոգոստոսի, գյուղատնտեսը վնասի չափը վորոշել է 40 տոկոս, սեպտեմբերի 5-ին նորից է կարկտու գալիս և գյուղատնտեսը հանձնաժողովի հետ միասին վորոշում են, վոր Գառապարյան Կարապետի ցորենը վնասվել է ընդամենը 50 տոկոս, ուրեմն վնասը պետք է հաշվել ընդամենը 50 տոկոս, այլ վոչ թե գումարել 40 տոկոս և 50 տոկոս:

28. Պտղատու (այգիների), տնկարանների ապահովագրութեան վերաբերյալ Պետապի պատասխանատվութեան սկսում է ծաղկեսերմնաբանի գոյանալու օրվանից, հետևապէս այն կարկտահարութեան դեպքերի համար, վորոնք տեղի յեն ունեցել մինչև ծաղկման շրջանը, Պետապը պատասխանատու չէ:

29. Ծխախոտը, բամբակը, խաղողը և յանձան: Հաշվարկում են աստիճանաբար ըստ նրանց տեխնիքական հատուկության, այդ պատճառով ել վնասի հաշվարկը կատարելու ժամանակ պետք է նկատի ունենալ արժեքի աստիճանական նվազումը և յեղնել բերքի համապատասխան կերպով նվազած հափից:

Ծանոթություն.—Ծխախոտը և խաղողը լուծարվում են համաձայն հատուկ հրահանգի:

30. Նախքան կարկտահարության վնասը վորոշելը հարկավոր է ստուգել ինչքան կարժենար բերքը, յեթե չկարկտահարվեր, վորովհետև Պետապի վնասը չպետք է բարձր լինի վոչ բերքի իսկական արժեքից և վոչ ել ապահովագրման արժից:

31. Աշխատանքը թեթևացնելու համար բերվում են վնասի հաշվելու հետևյալ որինակները.

Յենթադրենք վոր դյուղացի խաչատրյանը 1930 որսացույցային տարում ապահովագրել է 2,5 դեսյատին առաջին դասի բույսեր, իսկ կարկտահարվել է 1,2 դես. ցորեն 40 տոկոսով և դարի 0,8 դ. 30 տոկոսով: Այդ մշակույթների ամեն մեկ դեսյատինը կուպրային կարգով ապահովագրված է 30 ուր. հետևաբար յեթե այդ վնասը լիներ 100 առհաս ապա ապահովագրողը կստանար

1. 1,2 դես. ցորենի համար 36 ո.

2. 0,8 դես. դարու համար 24 ո.:

Բայց վորովհետև ցորենը վնասված է 40 տոկոս, իսկ դարին 30 տոկոսով ապա վնասը կազմում է՝

$$\begin{array}{r} \text{ա. Ցորենի } 36.40 \\ \hline 100 \\ \hline \text{բ. Գարի } 24.30 \\ \hline 100 \\ \hline \end{array} = 14 \text{ ո. } 40 \text{ կ.} \\ \hline = 7 \text{ ո. } 20 \text{ կ.}$$

Յենթադրենք վոր դյուղացի Վարդանյանը 1930 թ. որսացույցային տարում ապահովագրել է 2,00 դեսյատին

առաջին դասի բույսեր, իսկ կարկտահարվել է ցորեն 1,00 դես. 80 տոկոսով ևս ցորեն 1,50 դես. 60 տոկոսով և դարի 0,50 դես. 20 տոկոսով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր ապահովագրվել է 2,00 դես. բայց կարկտահարվել է 3,00 դես. այդ պատճառով անհրաժեշտ է դուրս բերել միջին տոկոսը և վնասը բաժարարել 2,00 դես. ապահովագրված տարածության համար:

$$\begin{array}{r} \text{Այն է } 1,50 \quad 60 = 90,00 \quad 180: 3,00 = 60 \\ 1,00 \quad 80 = 80,00 \quad \text{միջին տոկոսը} = 60\% \\ 0,50 \quad 20 = 10,00 \\ \hline \text{Ընդամենը } 3,00 \quad \text{—} \quad 180,00 \end{array}$$

Միջին տոկոսը դուրս բերելու ժամանակ հարկավոր է կարկտահարված տարածությաններն առանձին բազմապատկել վնասված տոկոսի վրա և ստացված գումարները բաժանել ամբողջ կարկտահարված տարածության վրա:

Ծանոթություն.—Վնասը հաշվելիս գործակալները պետք է ձեռք առնեն բոլոր միջոցները վարպետի սխալներ չանեն, աչքի առաջ ունենալով, վոր սխալների և ավելի գումարների տալու պատճառով գործակալը պատասխանատու չէ անձամբ և ավելի վճարելու պատճառով այդպիսի գումարները կզրվեն գործակալի անձնական հաշվին նույնպես, ինչպես այդ արվում է, անասունների սխալ լուծարման պատճառով:

32. Այն վնասները վորոնք առաջացել են, այնպիսի դաշտերում, վորտեղ կարկտահար չի յեղել բայց կարկտի հետևանքով առաջացել է սեւաֆ և սեւաֆից կուլտուրաները վնասվել են Պետապը չի բաժարարում (կանոնների § 1):

33. Այն պեպքերում յերբ վնասված տարածության համար 0,02 հեկտարից պակաս է, այդպիսին հաշվի չի առնվում և վնասը չի բաժարարվում, նույնպես չի բաժարարվում վնասը յերբ վնասի տոկոսը 5-ից ցածր է:

34. Աշխատանքը թեթևացնելու տեսակետից և ղեկավարության համար սրան կցվում են ախտի և հաշվարկի որինակները, նույնպես և պատրաստի աղյուսակ կարկտա-

հարության վնասի տոկոսները և տարածության գումարը վորոշելիս

35. Գործակալներին չի թույլատրվում առանց գավազանակի կամ տեսչի հաստատության բավարարել կարկտահարության մի վորևէ վնաս, անկախ գումարի չափից:

36. Ապահովագրական վարձատրության վճարումները գործակալը կատարում է անպայման այն գյուղերում, վորտեղ տեղի յե ունեցել կարկտահարությունը:

Ապահովագրական վարձատրության բաժանելու ժամանակ գյուղացու անգրագիտության պատճառով ստորագրում են ի տեղի մի ուրիշ գյուղացիներ, բայց վոչ թե հանձնաժողովի կազմի մեջ մասնող ընկերներից կամ թե գյուղխորհրդի նախագահը:

37. Ապահովագրական վարձատրությունը բաժանելիս, գործակալը գյուղխորհրդի հետ միասին կազմում են մի հատուկ հանձնաժողով, վորի ներկայությամբ կատարվում են ապահովագրական վարձատրության վճարումները, վորը և վավերացնում է ստացողների ստորագրությունը:

38. Ապահովագրական վարձատրության բաժանելուց հետո հանձնաժողովը, վորտեղ մտնում է նաև գործակալը, ակտի վերջում կազմում է մի հատուկ արձանագրություն, վորտեղ նշվում են տրված վարձատրության ընդհանուր գումարը և ամսաթիվը:

Նշելով բառերով և թվանշաններով բաժանված գումարների չափը:

39. Հանձնաժողովների ստորագրությունները վավերացվում են գյուղխորհրդի նախագահի կողմից, ղնելով գյուղխորհրդի կնիքը:

Կարկտահարության վնասները վճարելուց հետո գործակալն առանց սպասելու ֆինհալիտության, անմիջապես ակտերն ուղարկում է գավազանեցյալ պատվիրված պոստով:

40. Ակտերն իր ժամանակին կազմելու, գյուղատնտեսի հետ կամ միակ, վնասի հաշվարկումը կատարելու տուժող-

ների ապահովագրական վարձատրությունը վճարելու ինչպես նախատեսնված է սույն շրջաբերականում, նույնպես Գլխավոր վարչության հրահանգի մեջ, գործակալներին յուրաքանչյուր կարկտից վնասված տնտեսության համար տրվում է 3 կոպ. վարձատրություն:

41. Հողժողովի գյուղատնտեսները և մասնագետներն իրենց գործողման ընթացքում կարկտահարության վնասների լուծարքման համար, որակյան ստանում են 5 ուր:

Գյուղատնտեսները բացի դրանից ստանում են իրենց փոստացի ճանապարհածախսը:

ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

42. Հատուկ մշակույթները, վորոնք ապահովագրված են կամավոր կարգով և յենթարկվել են կարկտահարության, առաջիկաների համար կազմվում է լուծարքային ակտ ձև № 26 բլանկի վրա 2 որինակից:

43. Կամավոր ապահովագրությունները կնքելու դեպքում անդորրագրերում պետք է նշել սարնաների անունները և վնասները լուծարքելու ժամանակ բավարարել միայն այն սարնաների վնասները, վորոնք ցույց են տրված կամավոր ապահովագրության անդորրագրերում, իսկ վորոնք ցույց չեն տրված այդ դեպքում մերժել վնասը:

44. Հաշվի առնելով անցյալ տարիների կարկտահարության լուծարքման փորձը, յերբ լուծարքողները շատ դեպքերում համարյա ուշադրություն չեյին դարձնում ինչպես ապահովագրված նույնպես և կարկտահարված տարածությունները չափելու գործի վրա, վորից և Պետապր կրում եր խոշոր վնասներ, ներկայումս անցյալ տարիների բացերը վերացնելու և լուծարքման գործողություններն արագացնելու նպատակով թույլատրվում է մասնաշաղկան և խոշոր վնասառանձին դեպքերում կամավոր կարգով ապահովագրված մշակույթների տարածությունները չափելու համար հրավիրել հողաչափերին և նույնպես մասնագիտական ուսումնական հիմնարկների ուսանող պրակտիկաններին:

43.723

Հրավիրված աշխատակիցները չափում են սպահավորական անդորրադրում նշված ամբողջ սպահավորական տարածությունը, իսկ տուժված մշակույթների վնասի չափը և գնահատումը կատարում և լուծարքողը:

Լուծարքման ժամանակ լուծարքողները ստուգում են մի քանի տարածությունների կատարված չափումները (выборочная проверка) և պարզում արդյոք հրավիրված անձանց կողմից կատարված աշխատանքը վորչափ և ճիշտ:

Յեթե վնասումների լուծարքումը հանձնարարված և անհաշիվ գործակալներին և անհաշիվ գյուղատնտեսներին, այդ դեպքում չափումները կատարելու համար հրավիրված անձանց ինստրուկտորը (հրահանգումը) համաձայն տեխնիքական հրահանգի կատարում են գործակալները: Չափումների համար սահմանվում և հետևյալ վարձը:

1) Պաղատա ալգիններ, ծառերի քանակը հաշվելու հետ միասին 40 կոպեկ. 1 դեսյատինի համար.


2) խաղողի ալգիններ, վազերի (վորդերի) քանակը հաշվելու հետ միասին 50 կոպեկ.

3) Ծխախոտի պլանտացիաներ 50 կոպեկ.

4) Հատիկավոր ալգիններ, բանջարանոցներ և այլն մըշակույթներ 35 կոպեկ:

Տարածությունների չափումների հետ կապված բոլոր ծախսերը հարկավոր և ֆինհաշվառվածյան մեջ ցույց տալ տուանձին վորպես «այլ» ծախսեր:

Անդրադատալի Հայաստանի իրազոր՝ ՅԵԼԱՆՅԱՆ
Հայաստանի կոնսուլտանտ՝ ՍԱՐԳՍՅԱՆ



ՀՀ Ազգային գրադարան



NL0213840